

նապետը՝ Կարապետ Եսայան, Ատենա-
զպիրը՝ Յովսէփ Վասիլեան, Փոխ-Ատենա-
զպիրը՝ Գէորգ Պիլլալեան: Նոյնպէս Գոր-
ծադիր Ժողովի Ատենապետն է՝ Յովհ. ԵՐ-
տղեան, Ատենազպիրը՝ Արփիար Արփիա-
րեան, Անդամք՝ Զարեհ Շիշմանեան, Մինաս
Զերագ եւ Պետրոս Վասիլեան³:

Արարատեանի ազգային ծրածիրը եւ
գործունէութեան անմիջական արդիւնքը
պատճառ կ'ըլլան որ Հայութիւնը մօտէն շա-
հագրորուի իրմով եւ հետզհետէ տաք վերա-
բերում ցոյց տայ իրեն հանդէպ: Ընկերու-
թեան Գործադիր Ժողովը 1877 Ապրիլին
հրատարակաւ շնորհակալութիւն կը յայտնէ
«Գործադիրաց Ընկերութեան», որ 10 օրի-
նակ Սուրէնեան Գերականութիւն եւ 5 օրի-
նակ Ազնուորեան Աշխարհազրութիւն նուիր-
ած է Արարատեանի: Նոյնպէս Հ. Կղեմէս
Միլլիլեանի, որ «Ծաղկոցի տղոց համար»
յօրինած Աշխարհազրութեան 20 օրինակ
նուիրած է⁴:

Հայ Ժողովուրդի համահրանքն ու զնա-
հատանքը անկէ՛ մանաւանդ յայտնի կ'ըլլայ
որ զանգուածօրէն անդամագրուած ու բա-
ժանորդագրուած է Արարատեանի: Անդա-
մագրուիլը գծուար էր, քանի որ ըստ Ա. Կա-
նոնի՝ անդամ գրուելու համար հարկաւոր
էր բոլոր ընկերներու հաւանութիւնը: Բայց
ատոր հակառակ բաժանորդագրուած են մեծ
թուով: 1877 Ապրիլին, ուրեմն հիմնումէն
միայն 1 տարի վերջ, Արարատեանի Անդամ-
ներու թիւն էր 46, իսկ բաժանորդներունը՝
363, գումար՝ 409: Թիւ մը՝ որ մինչեւ այդ
ատեն միայն Բերայի «Համազգեսաց Ընկե-
րութիւն»էն գերազանցուած է:

Բաժանորդներու մէջ կան 23 Տիկիներ:
Աչքի կը զարնէ մեծ թիւը Հայ Կաթողիկէ
բաժանորդներու, որոնցմէ յիշենք քանի մը
անուններ. Ապտուլլահաններ, Գուլում-
ճեաններ, Թընկըրեաններ, Կէօզէյեաններ,
Շաշեաններ, Սաքրեաններ, Տիգրեաններ,
Փորթուզաբեաններ, Բըլճեաններ, եւ այլն⁵:

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Ու-
սումնական Որհնագրը, Ատենապետութեամբ
Մեքայէլ Փորթուզաբեանի՝ 1879ին կ'որոշէ
ամսէ ամիս Արարատեանի նուիրել 200 ոսկի⁶:

³ Մասիս, 1877, թ. 1966: — Ա. Տեղեկագիր,
Կ. Պ. 1877, էջ 10:
⁴ Մասիս, 1877, թ. 1966:
⁵ Տե՛ս Արարատեան Ընկերութիւն, Ա. Տեղեկա-
գիր, Կ. Պ. 1877, էջ 10—16:
⁶ Փուլը, 1879, թ. 1352:

Մասիս⁷ 1878 Օգոստոսին կ'իմացնէ որ
Ընկերութեան Վասպուրականի Տեսուչը՝
Մարկոս Նաթանեան ընդարձակ տեղեկու-
թիւն ղրկած է Դատուանի եւ իր շրջակայ
գիւղերու մասին: Նաթանեան Դատուանէն
անցած է Հայոց Ձոր, հոն եւս մանրամասն
քննութիւն մ'ընելու եւ տեղեկագրելու հա-
մար: Այս առթիւ թերթը կը շեշտէ որ
Մկրտիչ Արքեպ. Որիմեան քարոզներով ու
յօրդորներով կը խրախուսէ Պոլսոյ թէ՛ բնիկ
եւ թէ՛ նօղեհ Հայերը՝ իրենց կրցածին չափ
աջակցելու Արարատեանի «փրկաւէտ ջան-
քերուն»⁸:

1878 Սեպտ. 10ին Ընկերութեան Գոր-
ծադիր Ժողովը արտակարգ նիւս մը գումար-
բերով՝ կ'որոշէ ձմեռէն առաջ Վան քաղաքի
մէջ վարժապետանոց մը բանալ, որուն նպա-
տակն ըլլայ «գիւղային նախակրթարաններու
համար նախակրթիչ դաստիարակներ պատ-
րաստել, որոց մեծապէս կը կարօտի ազգն»⁹:

Մասիսի մէջ¹⁰ Արարատեան Ընկերու-
թիւնը 1878 Հոկտ. 12 շնորհակալութիւն կը
յայտնէ Սասկալի «Ասիական Ընկերութեան»,
որ «ազգասիրարար կը մատակարարէ Արա-
րատեան Ընկերութեան Վանայ վարժապե-
տանոցի ներկայ (1878) տարւոյս հարկաւոր
դասագրքերն»: Նոյնպէս շնորհակալութիւն
կը յայտնէ Գատրգիւղի «Միութիւն Ման-
կանց» Ընկերութեան, որ Արարատեանի
«Վանայ վարժապետանոցի համար այն
(1878) տարւոյ մէջ գրի կարեւոր պիտայք-
ներն» կը հօգայ¹¹:

Վանի վարժապետանոցը կարելի է ըլլար
սակայն 1878ին բանալ: Անոր տեղ Ընկերու-
թիւնը կը յաջողէ 1878ին բանալ իր երկրորդ
շրջանը:

Արարատեան Ընկերութիւնը Հայաստանի
իր երկրորդ վարժարանը բացած է Վասպու-
րական Նահանգի Կիւսեց գիւղի մէջ, որ
Վանայ արեւելեան հիւսիսային կողմը՝ Թի-
մար լեռնաձորի մէջ կ'իջնայ: Կիւսեցից՝ Թի-
մարի ամէնէն բազմամարդ գիւղն է 92 տուն
զուտ հայ բնակիչով: Իր շուրջը կան հե-
տեւեալ հայ գիւղերը. Պօզանց՝ 22 տուն,
Ատիկեօզէլ՝ 18 տուն, Կումա՝ 25 տուն, Պայ-

⁷ թ. 2170:
⁸ Մասիս, 1878, թ. 2170, 2175:
⁹ Մասիս, 1878, թ. 2175:
¹⁰ 1878, թ. 2188:
¹¹ Մասիս, 1878, թ. 2201, հմտ. թ. 2206:

րակ՝ 12 տուն: Այս գիւղերն ալ աշակերտ
կու տան Կիւսեցի վարժարանին: Կիւսեց
ատկէ առաջ բնաւ դպրոց ունեցած չէր: Գիւ-
ղացիք մեծ ուրախութեամբ կը մասնակցին
դպրոցի յարկ մը պատրաստելու աշխատանք-
ներուն:

Կիւսեցի Արարատեան վարժարանը կը
բացուի 1878 Նոյեմբեր 1ին եւ կ'ունենայ
98 մանչ եւ 17 աղջիկ աշակերտ, 2 ուսուցի-
չով¹²: Հետեւաբար սխալ է Արարատեան
Ընկերութեան Ա. Տեղեկագրին մէջ (անդ՝
էջ 7) ըսուածը թէ Ընկերութեան Բ. դպրոցը
1877ին բացուած է Դատուանի մէջ:

Արարատեան Ընկերութիւնը, Մ. Փոր-
թուզաբեանի եւ Մ. Նաթանեանի ջանքերով
եւ շատ մը արգելիքներու յաղթելէ վերջ՝ 1879
եւ շատ մը արգելիքներու յաղթելէ վերջ՝ 1879
Յունուար 1ին կը յաջողի Վան քաղաքի մէջ
բանալ ա՛յնչափ բազմացուած վարժապետա-
նոցը: Վարժապետանոցի ուսման ծրագիրը
չորս տարուան ընթացքէ մը կը բաղկանայ:
Քառամեայ շրջանը ընողը պիտի ստանար
վկայական մը: Աշակերտներու սկզբնական
թիւը կը սահմանուի 50: Առաջին տարին
կ'ունենայ 35 աշակերտ: Դասարանները բաժ-
նուած էին երկու կարգի: Փորթուզաբեան,
նուած էին երկու կարգի: Փորթուզաբեան,
որ Վասպուրականի մէջ բացուած բոլոր
վարժարաններու ընդհանուր տեսուչն էր՝
վարժարաններու ընդհանուր տեսուչն էր
Գիւղացիներու հետ ունենալով 8 ուսուցիչ¹³:

Վանի վարժապետանոցը՝ Արարատեան
Ընկերութեան բացած վարժարաններու կար-
գին մէջ երրորդն է ժամանակագրորէն:

Արարատեանի բացած չորրորդ վարժա-
րանն է Վասպուրականի Դատուան գիւ-
ղաքաղաքի մէջ բացուածը: Դատուան՝ Վա-
սպուրական արեւմտեան հարաւային կողմը
նայ ծովուն արեւմտեան հարաւային կողմը
կ'իջնայ եւ Բաղէչէն 4 ժամ հեռու է: Քաղա-
քականապէս կը վերաբերի Վանայ նահանգա-
պետութեան, իսկ եկեղեցականապէս՝ Տու-
պուսեանի: Ձուտ հայաբնակ այս գիւղա-
րուբերանի: Ձուտ 527 տուն բնակիչ, 26 տուն
քաղաքը ունէր 527 տուն բնակիչ, 26 տուն
ալ զանազան տեղեր պանդխտած: Իր շուրջը
զտնուած հայ գիւղերն են. Ուրդապ՝ 30 տուն,
Թուլս՝ 25 տուն, Խնձորկի՝ 20 տուն,
Զրիտը՝ 25 տուն, Ծամիրամ՝ 17 տուն, Ձոր-
գում՝ 9 տուն, Կծուակ՝ 40 տուն:

¹² Արարատեան Ընկերութիւն, Գ. Տեղեկագիր,
Կ. Պ. 1879, էջ 13—14:
¹³ Անդ՝ էջ 12—13:

Դատուանի Արարատեան վարժարանը
բացուած է 1879 Մարտ 16ին եւ ունէր 62
մանչ եւ 18 աղջիկ աշակերտ, 2 ուսուցի-
չով¹⁴:

Դատուանի թէ՛ գիւղի եւ թէ՛ դպրոցի
մասին ընդարձակ տեղեկութիւն կու տայ
Մ. Փորթուզաբեան Մասիսի մէջ¹⁵: Նա կը
պատմէ որ երբ Դատուանի Ժողովուրդը կը
յաջ թէ Արարատեան Ընկերութիւնը դպրոց
պիտի բանայ՝ ամբողջ Ժողովուրդը կը գոչէ.
«Աստուած հաստատ պահէ այդ Ընկերու-
թիւնը: Փա՛ռք քեզ Աստուած, փա՛ռք քեզ
որ արժանացանք այս օրեր տեսնել»: Իսկ
երբ Փորթուզաբեան տղոց գիրք եւ այլն կը
բաժնէ՝ տղաք կ'օրհնեն Ընկերութեան հիմ-
նադիրները, ըսելով. «Աստուած երկար
նաղիւրները, ըսելով. «Աստուած երկար
կեանք տայ Ստամպուլի աղաներուն. այդ
կեանք տայ Ստամպուլի աղաներուն. այդ
մարդերը ինչ որ կ'անեն մեզ, հայր տղային
չ'անենք. մեք ուտելիք հայ չունիմք այստեղ.
Գրքի, թուղթի փարս ո՞ր տեղէ պիտի ու-
նենայինք. Աստուած հաստատ պահէ Հայոց
այդ»:

1879 Մայիսին կը սկսի Արարատեան Ըն-
կերութեան չորրորդ տարուան գործունէու-
թեան շրջանը:

Բերայի «Բարեգործական Ընկերու-
թիւն»ը¹⁶, որ գեղեցիկ ծրագրներով 1860ին
սկիզբ ըրած էր իր գոյութեան, իսկ իրակա-
նին մէջ ոչ մէկ շօշափելի գործ տեսած՝
1873էն վերջ քաջուած էր հրապարակէն՝
1879ի սկիզբը բանակցութեան կը մտնէ Արա-
րատեան Ընկերութեան հետ, Վասպուրա-
կանի մէջ իր դրամով վարժարան մը բանալու՝
Արարատեանի վարչութեան տակ: Այս նպա-
տակին համար Բարեգործականը իր դրամա-
գիրքին տոկոսէն տարեկան 50 ոսկի կը յատ-
կացնէ: Արարատեան Ընկերութիւնը սիրով
կ'ընդունուէ այս առաջարկին եւ 1879 Մայիս
16ին Բարեգործականի անունով վարժարան
մը կը բանայ Վասպուրականի Հայոց-Ձոր
գաւառի Կէմ բազմամարդ գիւղին մէջ¹⁷:

Բարեգործականը Վասպուրականի իր
վարժարանին յատկացուցած տարեկան 50 ոս-
կին յետոյ 70ի կը բարձրացնէ¹⁸:

¹⁴ Գ. Տեղեկագիր, անդ՝ էջ 14—15:
¹⁵ Տե՛ս Մասիս, 1879, թ. 2322—2323:
¹⁶ Տե՛ս Բերայի Ընկերութեանց թ. 7ը:
¹⁷ Գ. Տեղեկագիր, անդ՝ էջ 16: — Մասիս, 1879,
թ. 2332: — Միացեալ Ընկերութիւնք Հայոց, Կ. Պ.
1882, էջ 11:
¹⁸ Մասիս, 1879, թ. 2423:

Կէմի վարժարանը՝ Արարատեանի բացած հինգերորդ վարժարանը կ'ըլլայ:

Արարատեանի բացած վեցերորդ դպրոցն է Վասպուրականի Խարակոնիսի գիւղի երկուսու վարժարանը: Գիւղս կը գտնուի Վանայ արեւելեան կողմը, 7 ժամ հեռու, Արշակի լճին մօտ: Ունէր 120 տուն հայ բնակիչ: Գպրոցը բացուած է 1879 Նոյ. 3ին: Աշակերտներու թիւն էր (ձմեռը) 110: Ունէր 2 ուսուցիչ եւ 1 տնտես: Վարժարանին պաշտպանը՝ Մկրտիչ Սանասարեան՝ տարեկան 44 օսմ. ոսկի կը վճարէր (Միացեալ Ընկերութիւնը Հայոց, անդ՝ էջ 11):

Արարատեանը շատոնց ծրագիր ունէր Վասպուրականի Գործոթ գիւղի մէջ ալ նախակրթարան մը բանալու (Տե՛ս Ա. Տեղեկագիր, էջ 7): Թէեւ Միութեան Տնօրէն Սորբի Ատենապետ՝ Գարրիէլ Նորատունկեան (յետոյ Փաշա եւ Արտաքին Գործոց Նախարար) Ընկերութեան 1879 Ապրիլ 15ին սարքած մեծ կոչուներն առթիւ խօսած ճառին մէջ կ'ըսէ որ Գործոթի մէջ ալ բացուած է դպրոց մը (Տե՛ս Մասիս, 1879, Թ. 2301), սակայն Արարատեան Գործոթի մէջ 1879 Նոյ. 6ին բացած է իր վարժարանը (Տե՛ս Միացեալ Ընկերութիւնը Հայոց, Կ. Պ. 1882, էջ 11): Գործոթ ունէր 515 տուն հայ բնակիչ եւ կը գտնուէր Վանայ հիւսիսային արեւելեան կողմը, 14 ժամ հեռու, Բերդի (Արեւրանի) վիճակին մէջ, ընդարձակ դաշտերով եւ հայ գիւղերով շրջապատուած: Գործոթի դպրոցը երկսեռ էր: Աշակերտութեան թիւը ձմեռը՝ 60—65, իսկ ամառը՝ 20—25 էր: Ունէր 1 ուսուցիչ եւ 1 տնտես:

Գործոթի վարժարանը՝ Արարատեանի բացած եօթներորդ վարժարանն է:

Մինչ Արարատեան Ընկերութիւնը, իր ծրագրին համեմատ, Հայաստանի մէջ ձրի ուսում ծաւալելու համար իրեն ասպարէզ ընտրած Վասպուրականի հայաշատ կիցիոնը կրցած էր վեց վարժարան եւ մէկ վարժապետանոց բանալով ետանդուն գործի լծուիլ՝ յանկարծ իրեն կը ներկայանար գործի նոր ասպարէզ մը. — Ներսէս Արքեպ. Վարժապետեան, Կ. Պոլսոյ Պատրիարքը, Ընկերութեան ուշադրութիւնը կը հրաւրէր Հայաստանի ուրիշ մէկ կարեւոր կէտի մը վրայ, ուր Հայութեան հոծ գանգուած մը նոյնքան կարօտ էր ուսման եւ լուսաւորութեան: Այդ հայաշատ վայրն էր Տարնուի շրջանը:

Ընկերութիւնը հաճոյքով յանձն կ'առնէ Ս. Պատրիարքին այդ փախալն ալ կատարել եւ վեց ամսուան քննութիւններէ վերջ՝ կը համոզուի թէ Տարնուի Հայութեան մէջ կրթութիւնը ծաւալելու համար անհրաժեշտ է առ այժմ դպրոց բանալ Չարսանգա, Քիլի եւ Չմշկաձագ¹⁹: Ուստի Ընկերութիւնը դէպի Տարնու ճամբայ կը հանէ իր Գործադիր Ժողովի մէկ անդամը — Պետրոս Վասիլեան — լիազօրելով զինքը անձամբ կատարելու վարժարաններու բացումը:

Մասիս՝ արձագանգ ըլլալով Ընկերութեան այս կարեւոր ձեռնարկին՝ լուր կուտայ որ Վասիլեան 1879 Մայիս 21ին ճամբայ ելած է՝ Ընկերութեան հրահանգ ունենալով «պէտք եղած տեղեր վարժարաններ բանալ, դասատուներ կարգել եւ մինչեւ որ արժանաւոր տեսուչ մը ղրկուի՝ տեսչի պաշտօնն ալ կատարել»²⁰:

Փունջ²¹ կը գովէ Վասիլեանի անձնութիւնը, շեշտելով թէ ան միայն ճամբու ծախքը ընդունած է Ընկերութեան, մնացած բոլոր ծախքերը «իր անձնականէ հոգալ յանձն առնելով»:

Մեկ կը պակսին մանրամասնութիւններ Վասիլեանի գործի մասին: Հայ թերթերը կը լռեն: 1879 Սեպտեմբերին Մասիս²² չունի տակաւին լուր Վասիլեանի ձեռնարկի գործադրութեան մասին:

Բարեբախտաբար ունինք մեր առջեւ «Միացեալ Ընկերութեան» «Երկամեայ Տեղեկագիրը», հրատարակուած 1883ին, ուր միտմի նշանակուած են Արարատեանի սկսած եւ «Միացեալ» շարունակած կրթական գործի աստիճանական ընթացքը Տարնուի Հայութեան մէջ, ուր կը տեսնուին նաեւ թէ ո՞ր եւ ե՞րբ բացուած են դպրոցները: Արարատեանի գործի մասին ամբողջական գաղափար մը տուած ըլլալու համար՝ հոս յոռաջ կը բերեմ Տարնուի մէջ բացուած վարժարաններու ցանկը՝ ժամանակադրօրէն, իրրեւ լուսարանութիւն աւելցնելով որ մինչեւ 1880 Յունիս 1 բացուած վարժարանները՝ Արարատեանի կողմէ բացուած, իսկ անկէ վերջինները՝ «Միացեալ»ի կողմէ բացուած

¹⁹ Գ. Տեղեկագիր, էջ 16—17:
²⁰ Մասիս, 1879, Թ. 2331:
²¹ 1879, Թ. 1376:
²² Տե՛ս Թ. 2423:

են, քանի որ գիտենք թէ 1880 Յունիս 1ին Արարատեանը միանալով 2 ուրիշ Ընկերութիւններու հետ՝ կը դադրի առանձին իր անունով գործելէ:

1. Բերրի (Չարսանձագ) գիւղաքաղաքին նախակրթարանը բացուած է 1879 Օգոստոս 1ին: Ունի 140 աշակերտ: Բերրի կենդրոնն է Չարսանձագի վիճակին եւ կը զբաղուի Սարբերդի հիւսիսային, Բալուի արեւմտեան կողմը, ունի 430 տուն հայ բնակիչ²³:

2. Խուփս (Քիլի) գիւղի նախակրթարանը բացուած է 1879 Դեկտեմբեր 1ին. ունի 120 աշակերտ՝ 3 ուսուցիչով եւ 1 տնտեսով: Խուփս՝ Քիլի արեւմտեան կողմը կը գտնուի, 3 ժամ հեռաւորութեամբ: Ունի 185 տուն հայ բնակիչ²⁴:

3. Խօշմաք (Բալու) գիւղի նախակրթարանը բացուած է 1880 Մարտ 1ին 70—80 աշակերտով եւ 1 ուսուցիչով: Խօշմաք, գիւղացի գիւղի գիւղ մէջ Բալուէն 2 ժամ դէպի հիւսիս: Ունի 80 տուն հայ: Տեղացիներէն Պօղոս Ծաղիկեան յանձն առած է առաջին տարին 15—20 օսմ. ոսկի վճարել վարժարանի ծախքերուն համար²⁵:

4. Չմշկաձագի երկսեռ նախակրթարանը բացուած է 1880 Ապրիլ 1ին եւ ունի 100—110 աշակերտ՝ 3 ուսուցիչով: Չմշկաձագ կը գտնուի Սարբերդի հիւսիսը, Եփրատի մօտ՝ 207 տուն հայ բնակիչով²⁶:

5. Քիլի-Գասապայի բարձրագոյն մանչերու նախակրթարանը բացուած է 1880 Դեկտեմբ. 1ին՝ 160—180 աշակերտով, 3 ուսուցիչով եւ 1 տնտեսով, Տեղացիք տարեկան 66 օսմ. ոսկի կը վճարեն վարժարանին համար²⁷:

6. Քիլի-Գասապայի բարձրագոյն աղջկանց վարժարանը բացուած է 1880 Դեկտեմբ. 1ին: Աշակերտուհիներու թիւն է 100—140, վարժուհի եւ ուսուցիչ՝ 3: Վարժարանն բացուած է «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան» խնդրանքով, որ տարեկան 140 օսմ. ոսկի կը վճարէ վարժարանին համար:

²³ Տե՛ս «Միացեալ Ընկերութիւնը Հայոց», Տեղեկագիր Երկամեայ, Կ. Պ. 1882, էջ 9:
²⁴ Անդ, էջ 9:
²⁵ Անդ, էջ 9—10:
²⁶ Անդ, էջ 9:
²⁷ Անդ:

Քիլի քաղաքը Երզնկայի արեւելեան կողմն է, 20 ժամ անկէ հեռու, համանուն գետակի հովտին մէջ եւ ունի 200 տուն հայ բնակիչ²⁸:

Հոս կը վերջացնենք «Արարատեան Ընկերութեան» կրթական գործի պատմութիւնը:

Այժմ տեսնենք համառօտիւ Ընկերութեան նիւթական վիճակը:

Արարատեան Ընկերութեան նիւթական միջոցները հետեւեալներն են. 1. Անդամավճարներ, 2. Վիճակատմներ, 3. Կամաւոր նուէրներ:

1. Ամէն անգամ, բացի ամսական 10 դահեկան անդամավճարէ՝ պարտաւոր է ամիսը կամ 10 դահեկան նուէր հաւաքել եւ կամ ինքն իր կողմէ 5 դահեկան վճարել (Հիմնական Կանոն, Յօդ. 12—13):

2. Ընկերութիւնը հանած էր որոշ թուով վիճակատմներ, որոնց վաճառումով միայն 1878—1879 դոյացած էր 60,000 դահեկան:

3. Ընկերութեան ամենակարեւոր նիւթական աղբիւրը կը կազմէն սակայն կամաւոր նուիրատուութիւնները: Հայ ժողովուրդի գործնական համակրանքը մեծ եղած է այս Ընկերութեան հանդէպ: Ասիկա բացատրել կարեւարու համար յիշենք հետեւեալ պարագաները.

Ներսէս Վարժապետեան Պատրիարքը յատուկ կոնդակով Ազգին կը յանձնարարէ Արարատեան Ընկերութիւնը²⁹: Խառնակի «Ասիական Ընկերութիւն»ը յանձն կ'առնէ Վանայ վարժապետանոցի դասադրքերը հոգալ, Գատըղի «Միութիւն Մանկանց» Ընկերութիւնը կը ստանձնէ նոյն վարժապետակրթականներն հայթայթել³⁰: Մայնոցի գրեթեականներն հայթայթել կը վարակէ գրեթեականներն ընդհանրապէս օրինակը կը վարակէ գրեթեականներն ալ ու ետեւէ ետեւ կը հանին նպաստներ Սարբերդուպուլէն, Երզնկայէն, Երզնկայէն, Իզմիրէն, Լոնդոնէն, Մանչեսթրէն, Մարսէյէն, Նիկիտիկայէն, Տրապիզոնէն, Վարսէյէն, Նիկիտիկայէն, Տրապիզոնէն, Կարկաթայէն, եւ այլն: Իզմիրի մէջ գտնէն, Կարկաթայէն, եւ այլն: Իզմիրի մէջ «մի քանի ուսումնական եւ ազգասէր անձինք... խորհուրդ մը կը յղանան, այսինքն՝ Արարատեան Ընկերութեան մէկ նիւթ կազմել... մասնաւոր հանգանակութիւններ ընել եւ բաժանորդներ գտնել³¹»:

²⁸ Անդ:
²⁹ Գ. Տեղեկագիր, անդ՝ էջ 4:
³⁰ Անդ:
³¹ Մասիս, 1878, Թ. 2183:

Արարատեան Ընկերութիւնը իր դրամին մէկ մասը, որուն անմիջական գործածութեան պէտք չունէր՝ տոկոսով աւանդ դրած էր Պոլսոյ առևտրական մեծ տուներէն Սերովբէ եւ Սարգիս Կիւլպէնկեաններու քով⁴⁴ :

Ընկերութիւնը իր Գ. շրջանին հարկ կը համարի Հիմնական Կանոնագրութիւնը փոփոխութեան ենթարկելու, նոր յաւելումներ ընելով: Փոփոխութիւնը տեղի ունեցած է 1878 Մայիս 14ին, Օգոստ. 27ին եւ 1879 Փետր. 25ին: Այս նոր «Հիմնական Կանոնագրութիւն»ը կը բովանդակէ 56 Յօդուած: Ատկէ զատ Ընկերութեան Ընդհ. Ժողովը կ'ունենայ իր «Ներքին Կանոնագրութիւն»ը՝ 87 Յօդուածով, կազմուած՝ 1878 Յունիս 9ին⁴⁵ :

Մասիս⁴⁶ աչքի առջեւ ունենալով Արարատեանի Գ. Տեղեկագիրը եւ երեք տարուան անոր բարոյական ու նիւթական արդիւնքը՝ կ'ընդունի որ այս «ամենակարեւոր Ընկերութիւնը ջանքով ու արդիւնքով լի երեք տարիներ բոլորեք» է, բայց, կ'ըսէ, «չեմք տեսներ որ իւր նպատակին վստահեան համապատասխան քաջայրուցութիւն գտած լինի ազգէն, որոյ մատուցած օգնութեան՝ համեմատական տեսակէտով միայն կրնամք նայիլ... Եթէ կը գգամք թէ մեր ազգին վերածնութիւնն ուսմանց եւ արուեստից շնորհիւ է, եթէ փորձով գիտեմք թէ տգէտ ժողովուրդ մը բաղաձայնիք աշխարհիս մէջ տեղ չունի եւ վաղ կամ անագան կարնչելու դատապարտուած է, եթէ կը զգամք թէ մեր ազգին կրած աղետից մէկ մեծ մասն իւր տգիտութեան պատճառաւ է, եթէ համոզուած եմք այս ճշմարտութեանց, որք դժբախտաբար անժխտելի են, պէտք է աւելի անձնուրբութեամբ աշխատիմք մեր դպրոցաց համար եւ օգնութիւն յիսնայեմք մեր այն Ընկերութեանց, որք այլեւայլ ձեւերու եւ անուններու ներքեւ, միեւնոյն ազնիւ նպատակին, այսինքն ազգին մէջ ուսում ծաւալելու կ'աշխատին»:

Թէև Արարատեանը առաջին Ընկերութիւնը չէ որ Հայաստանի մէջ դպրոց բանալու ծրագիր ունի — իրմէ առաջ կար Բերայի «Դպրոցասիրաց»ը եւ իրեն հետ ու իրմէ վերջ ուրիշներ ալ կային — սակայն կարելի է հաս-

տատ կերպով ըսել թէ անոնցմէ ոչ մէկը Արարատեանի բարոյական մեծ ազդեցութիւնը ունեցած է իր ժամանակին վրայ⁴⁷ : Իր հմայքը զերազանցած է միայն «Միացեալ Ընկերութիւն»ը, որ սակայն ուրիշ բան չէ, բայց եթէ իր իսկ շարունակութիւնը:

1880 Յունուարին, իր անդամներու 3/4ին քուէով, Արարատեան Ընկերութիւնը կ'ընդունի Բերայի «Դպրոցասիրաց-Արեւելեան» եւ Խաչատրեանի «Կիլիկեան» Ընկերութիւններու հետ միանալու սկզբունքը⁴⁸, որոնց նպատակը նոյնպէս Հայաստանի մէջ դպրոց բանալ եւ ուսում ծաւալել էր: Այս երեք Ընկերութիւններու միացումով կազմուած է «Միացեալ Ընկերութիւնը Հայոց»ը, ինչպէս տեսանք արդէն սակէ առաջ⁴⁹: Միացումը տեղի ունեցած է 1880 Յունիս 1ին:

Արարատեան՝ այս միացումի առթիւ «Միացեալ»ին կը յանձնէ 330, 688 զուրուշ⁵⁰:

(Շարունակելի): Լ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

Յիւրի Գիւրճեան. ի յոյս ընծայեց առաջին անգամ ամբողջական բնագրով, ուսումնասիրութեամբ, ծագութիւններով, յանելումներով եւ բառարանով ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ [ՄԵԼԻՔ-ՄՈՒՇԿԱՄ-ԲԱՐԵԱՆ], Նիւ Եորք 1952. մեծ 8⁰, էջ 756 [չբառարանութիւն Լ. Բ. Ը. Միւրքեան Մեկգնեան իմնադրամի]:

Յիւրի մեր շնորհալի տաղատացներէն մէկն է, հարուստ իր ինքնարուզի արտագրութիւններով, ժամանակով հնադոյնը իր նամակներուն մէջ, բայց շատ ուշ ուշադրութեան արժանացած: Մանօթ էր իր ստեղծագործութիւններէն թիւ մը միայն, ցրուած տաղարաններու մէջ, որոնցմէ քիչերը տպագրութեամբ մատչելի: Կը յիշուէր «Յիւրի գիրք» մը, հաւաքածոյք մը Յիւրիեան տպագրու, բայց ծանօթ չէր այդպիսի ձեռագիր մը: Գեղեցիկ գուգադիպութեամբ Օքսֆորդի համալսարանը 1899ին ուրիշ ձեռագիրներու հետ կը ստանայ երկու Յիւրիեան տաղերու

⁴⁷ Շիրակ, Աղեքսանդրիա 1905, էջ 179:
⁴⁸ Մասիս, 1880, թ. 2529:
⁴⁹ Տե՛ս Ղալաթիոյ Ընկերութիւնները՝ թ. 20:
⁵⁰ Տե՛ս «Միացեալ Ընկերութիւն» Հայոց, Երկամսէց Տեղեկագիր, Ետեւը:

հաւաքածոյք, մին անթուական, գրուած իրր ժի. դարուն եւ միւսը թերակատար, գրուած 1613ին Հալէպ, Մեղքոն Սերաստացիէն (հմտ. Catalogue of the armenian manuscripts in the Bodleian Library by the Rev. Sukias Baronian and F. C. Conybeare, Oxford 1918, 238—243, ձեռագիրք թ. 214 եւ 215): Հայերէնագէտն Կոնիքիը մտադիր էր հրատարակել այս հաւաքածոյքներու մէջ պահուած Յիւրիեան տաղերը: 1907ին Օքսֆորդ կը հասնի Տիրայր վարդապետ (սպա եպիսկոպոս եւ արքեպիսկոպոս) ցուցակագրելու Բողլէեան Մատենադարանի ձեռագիրները. Յիւրիի տաղերը կը հետաքրքրեն զինքը եւ կ'օրինակէ: Կը հետապնդէ այնուհետեւ վեր հանել ուրիշ Հաւաքածոյքներու մէջ պահուած Յիւրիեան տաղերը, Բրիտանական Թանգարանի, Մանչեսթրի Կրաւֆորդեան Գրադարանի, Պարիսի, Վենետիկի, Վիեննայի, Երուսաղէմի, Էջմիածնի եւ Կ. Պոլսոյ Անտոնեան Միարանութեանց Մատենադարաններու մէջ: Կը յաջողի այսպէս ոչ միայն բարձրացնել տաղերու թիւը 51ի, այլ եւ համեմատել զանոնք ձեռք բերուած օրինակներու հետ:

Բնագիրը այսպէս վերականգնելէ ետքը կը պատրաստէ Ներածութիւնը Յիւրիի անձին, ժամանակին եւ տաղերու նկարագրին շուրջը: Ն. Ման յանձն կ'առնէ սպա ներկայացնել այս աշխատութիւնը Պետրոզորդի Ռուսական Գիտութեանց Կաճառին, որ կը ստակէ զայն եւ յանձն կ'առնէ տպագրել իր ծախքով: Տպագրութիւնը կը սկսի 1917ին: Հազիւ առաջին չորս թերթերը տպագրուած, կ'ընդհատի տպագրութիւնը Համաշխարհային առաջին պատերազմին պատճառով: Յաջորդ տարին Արարատ ամսագրին մէջ ըլլա տեսաւ Տիրայր եպիսկոպոսի ստորագրութեամբ «Մոռացուած մի հոյ երգիչ» (էջ 64—88, 171—203), որ ոչ այլ ինչ էր, բայց եթէ նախատեսուած Ներածութիւնը Յիւրիի տպագրու հրատարակութեան:

1920ին Տիրայր եպիսկոպոս կը մեկնի Ամերիկա իրրեւ առաջնորդ, յուսով թէ կը վերադառնայ միւսանգամ, ինչ որ չի յաջողել: Իր ձեռագիր աշխատութիւնները թողուած էր Էջմիածին, անոնց թուին մէջ նաեւ Յիւրիի Գիւրճեանի բնագիրն եւ այլ տաղձները: Բնագիրն Ներածութեան հետ կը հասնի իրեն 1937ին, զոր յանձն կ'առնէ Երու-

սաղէմի պատրիարքը Թորգոմ արքեպ. Գուշակեան հրատարակել Դուրեան Մատենադարին մէջ. բայց 1938 վախճանելով պատրիարքը՝ տպագրութիւնը դարձեալ կը յապաղի: Ի վերջոյ Լ. Բ. Ը. Միւրքեան կը վեճակուի հրատարակ հանել աշխատութիւնս իրրեւ հրատարակութիւն Մեղքոնեան Հիմնադրամի:

Այս միջոցին Տիրայր Սրբազանի անտիպ աշխատասիրութիւնները կը գետեղուին էջմիածնի Պետ. Ձեռագրատան մէջ: Անոնց թուին մէջ էին Բողլէեան եւ այլ Մատենադարաններէ օրինակուած Յիւրիեան տաղերը: Ասոնց հիման վրայ եւ Մ. Մկրեանի եւ Ե. Թորոսեանի խմբագրութեամբ ըլլա տեսաւ Յիւրի. բանաստեղծութիւններ, Երեւան 1941, 88, էջ 274: Այս հատորս կը պարունակէ 41 տաղ եւ 3 փոփոխակ: Այս հրատարակութիւնը առիթ տուած էր ինձ գրելու «Ո՞վ է Յիւրի» Ազգարար (Բէյրութ) 1945, թ. 124, 135: Թէ Երեւանի հրատարակութիւնն եւ թէ այս յօդուածներս անձանօթ մնացած են Տիրայր Սրբազանին. որուն Ներածութիւնն կամ «Գննական ուսումնասիրութիւնը» թուական կը կրէ «1938, Օգոս. 16, Ն. Եորք»:

Տիրայր Արքեպիսկոպոս Յիւրիի «Գիւրճեանը», տաղերուն հաւաքածոյքը կը զնէ մեր առջեւ հոյակապ հատորով մը, որ կը բովանդակէ Ա. Գննական ուսումնասիրութիւն (էջ 1—238). Բ. Ուսմանորք առաջալ (էջ 241—558). Յանելում, Բանարան, Յանկ յատուկ անուններու, եւ այլն (623—756):

Ա. մասը նուիրուած է Յիւրիի կենսագրութեան. հակիրճ տեսութեամբ ամփոփած է ինչ որ ըսուած է Յիւրիի մասին մինչեւ 1923 (էջ 1—14): Լ. Ղ. Ալիշանի յառաջ բերած տեղեքը, թէ Յիւրի «էր որդի Թագվորանի, կորորդի Դոզոնայի... որ ի վանս բանասիրաց» (հմտ. նաեւ էջ 129—131). ուշադիր կ'ընեմ, որ առնուած է Հոմերի Հայոց Հիւրանոցի (այժմեան Ս. Վլաս կիկեղեցոյ) Մատենադարանի մէկ ձեռագրէն, որ իմ կազմած Յուցակին մէջ 24 համարը կը կրէ. այս տեղ, թղ. 65ր Յորժամ մահն մօտենայ ու գրօղն գայ» տաղին (= Թ) վերնագրին մէջ կ'ըսուի. «Ուսմանոր առաջալ է Յիւրիկն որդի Թագվորանի, Երայր որդի Դոզոնայի (ի) վերայ իւր մեղացն, ի վարս բանայսիրաց»: Այս «Թագվորան» իմանալու է «Թագ-